ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2018/113

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Առնիկա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Ա. Գրիգորյանի (Լիազորագիր, տրված՝ 21.12.2018թ.)

Հ. Ենգոյանի (Լիազորագիր, տրված՝ 21.12.2018թ.)

Ա. Պարանյանի (Լիազորագիր, տրված՝ 21.12.2018թ.)

Քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից 21.12.2018թ. ներկայացված և 21.12.2018թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2018/113 բողոք) որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ, պարզեցի հետևյալը.

1. **«Առնիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Առնիկա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 21.12.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Առնիկա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2018թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Առնիկա» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերը նշված արձանագրության շարունակության համաձայն՝

- 21.11.2018թ. Eauction համակարգի միջոցով 1-ին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկվել է ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, սակայն սահմանված ժամկետում «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից պահանջվող որևէ փաստաթուղթ չի ներկայացվել:
- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետը որոշել է «Առնիկա» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես

նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

«Առնիկա» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և Ընթացակարգի 1-ին, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, սակայն՝ 29.11.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Առնիկա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում որակավորման չափանիշներին իրեն համապատասխանությունը հավաստող որևէ փաստաթուղթ չի ներկայացրել և նույն կետով էլ գնահատող հանձնաժողովը որոշել է «Առնիկա» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ «Առնիկա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է 22.11.2018թ., ներկայացրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, սակայն Eauction համակարգի թերի աշխատանքի հետևանքով՝ Ընկերության կողմից ուղարկված փատաթղթերը գնահատող հանձնաժողովին չի հասել: Համակարգի միջոցով փաստաթղթերն ուղարկելու ժամանակ Ընկերությունը վստահեցնում է, որ Eauction համակարգի Ընկերության անձնական էջում այրվել է կանաչ լույսը և եկել ծանուցում, որը փաստաթղթերը հաջողությամբ բեռնվել են,

իսկ կանաչ լույսն այրվում է միայն այն ժամանակ, երբ փաստաթղթերը հաջողությամբ ուղարկվում են:

Վերոգրյալի հետ կապված Ընկերությունը ՀՀ ֆինանսների նախարարության թեժ գծին ահազանգել է նշված խնդրի մասին և պահանջել է հանդիպում համապատասխան համակարգի սպասարկման բաժնի աշխատակիցների հետ, որտեղ բարձրաձայնել է «Առնիկա» ՍՊԸ-ի մոտ առաջացած խնդիրը և պահանջել ՀՀ ֆինանսների նախարարությունից տրամադրել համապատասխան պարզաբանում, որպեսզի Ընկերությունը հնարավորություն ունենա բողոքարկելու «Առնիկա» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը:

Ի պատասխան «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից 30.11.2018թ. կատարված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տվել է պարզաբանում, որում մասնավորապես նշվել է /կցվում է/.

«Ահազանգի հիման վրա 30.11.2018թ. ժամը 15:24-ին խնդրի պարզաբանման պահանջ է ներկայացվել էլեկտրոնային աճուրդի համակարգի ծրագրային ապահովումն իրականացնող կազմակերպությանը, որը իրականացնելով տվյալների հենքի ուսումնասիրություն՝ փաստել է, որ «Առնիկա» ՍՊԸ օգտատերը (N48997) 22/11/2018թ. ժամը 11:28:36-ին մուտք է գործել վերոգրյալ ընթացակարգի «որակավորման փաստաթղթեր» ներբեռնելու էջ, այնուհետև 22.11.2018թ. ժամը 11:34:54-ին դուրս է եկել համակարգի «Մրցույթների ցանկ» բաժին, սակայն «որակավորման» փուլի տվյալներ չեն տրամադրվել համակարգ և դրանք առկա չեն հենքում»:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պարզաբանմամբ հստակ է, որ «Առնիկա» ՍՊԸ-ն 22.11.2018թ. ժամը 11:28:36-ին մուտք է գործել էլեկտրոնային աճուրդի համակարգի «որակավորման փաստաթղթեր» ներբեռնելու էջ և ժամը 11:34:54-ին դուրս է եկել համակարգի «Մրցույթների ցանկ» բաժին:

Այս փաստի հետ կապված Ընկերությունը հայտնել է, որ եթե որևէ ընկերություն մուտք է գործում Eauction էլեկտրոնային աճուրդի համակարգի «որակավորման փաստաթղթեր» բաժին, ապա կամ մուտք պետք է գործի ներբեռնելու էջ և ուղարկի համապատասխան փաստաթղթերը, կամ հրաժարվի ներբեռնելու էջի գործողությունից և նոր դուրս գա համակարգի «Մրցույթների ցանկ» բաժին: «Առնիկա» ՍՊԸ-ի պարագայում՝ ընկերությունը

մուտք է գործել էլեկտրոնային աճուրդի համակարգի «որակավորման փաստաթղթեր» ներբեռնելու էջ և ժամը 11:34:54-ին դուրս է եկել համակարգի «Մրցույթների ցանկ» բաժին, այսինքն առկա չէ Eauction էլեկտրոնային աճուրդի համակարգի «որակավորման փաստաթղթեր» բաժնի ներբռնելու էջից հրաժարվելու գործողություն, որը միանշանակ կարձանագրվեր էլեկտրոնային աճուրդի համակարգի ծրագրային ապահովումն իրականացնող կազմակերպության կողմից:

Այնուամենայնիվ, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումը չգոհացրեց «Առնիկա» ՍՊԸ-ին, քանի որ էլեկտրոնային աճուրդի համակարգի ծրագրային ապահովումն իրականացնող կազմակերպությունում տեղի ունեցած հանդիպման ընթացքում կազմակերպության պատասխանատուներն ընդունեցին ծրագրի թերացման հետևանքով առաջացած խնդրի փաստը և պարտավորվեցին տալ հստակ պարզաբանում և կապված վերոգրյալի հետ «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից լիազորված փաստաբանի կողմից կրկին հարցում ներկայացվեց ՀՀ ֆինանսների նախարարություն, որով Ընկերությունը մասնավորապես խնդրել է հայտնել.

1. Արդյոք տեխնիկապես հնարավոր է, որ մասնակցի կողմից անհրաժեշտ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ուղարկվեն, սակայն դրանք տեխնիկական խնդիրների պատճառով առկա չլինեն հենքում և ինչով դա կարող է պայմանավորված լինել:

2. Արդյոք հնարավոր է պարզել, թե «Առնիկա» ՍՊԸ օգտատերը (N48997) 22/11/2018թ. ժամը 11:28:36-ից մինչև ժամը 11:34:54-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի «որակավորման փաստաթղթեր» ներբեռնելու էջում ինչ գործողություններ է կատարել:

Ի պատասխան փաստաբանի վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.12.2018թ. թիվ 27/26-1/23598-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գրությամբ բարձրացված խնդրի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է էլեկտրոնային աճուրդի համակարգը սպասարկող կազմակերպությանը: Վերջինս տեղեկացրել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով

գնման ընթացակարգի շրջանակներում «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից նեկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր տվյալների հենքում առկա չեն:

Կազմակերպությունը հայտնել է նաև, որ մասնակցի համապատասխան աշխատակիցը 22/11/2018թ. ժամը 11:28:36-ին մուտք է գործել ընթացակարգի որակավորման փաստաթղթեր ուղարկելու էջ: Նույն օրը ժամը 11:34:54-ին աշխատակիցը դուրս է եկել հիշյալ էջից և մուտք է գործել մրցույթների ցանկ:

Միաժամանակ տեղեկացվել է, որ ըստ սպասարկող կազմակերպության հավաստման՝

1) համակարգում խափանումներ չեն արձանագրվել, որը կարող էր պատճառ հանդիսանալ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը տվյալների հենքին չհասնելու համար.

2) հնարավոր չէ պարզել, թե մասնակցի հիշյալ աշխատակիցը 22/11/2018թ. ժամը 11:28:36-ից մինչև ժամը 11:34:54-ը որակավորման փաստաթղթեր բեռնելու էջում ինչ գործողություններ է կատարել դիտարկիչում (բրաուզերում):»

Ընկերությունը հայտնել է, որ եթե նույնիսկ «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգի ծրագրի թերացման պատճառներով սահմանված եռօրյա ժամկետում որակավորման փաստաթղթերը չեն ներկայացվել Պատվիրատուին, ապա գնահատող հանձնաժողովի կողմից պետք է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն՝ հնարավորություն ընձեռնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, որի գնահատող հանձնաժողովի կողմից անտեսվել է:

Այս հարցի կապակցությամբ (թե արդյոք Ընկերությանը պետք է տրվեր շտկում կատարելու հանարավորություն) Ընկերության կողմից լիազորված փաստաբանը 11.12.2018թ. գրությամբ հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հետևյալ բովանդակությամբ (կցվում է).

«Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորողէ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-

րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ խնդրել է հայտնել, եթե առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել, ապա ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արդյոք պարտավոր չէ Կարգի 47-րդ կետի համաձայն՝ հնարավորություն ընձեռնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:»

Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.12.2018թ. թիվ 01.1/27-1/23597-18 գրությամբ հայտնել է, որ 11.12.2018թ. գրությամբ բարձրացված հարցը կարգավորված է Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով և 47-րդ կետով:

Այսպիսով, ակնհայտ է, որ լիազոր մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության, գրությունից բխում է, որ եթե անգամ առաջին տեղն զբաղեցրած մասնակից «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել (չնայած Ընկերության կողմից ներկայացվել է), ապա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր առաջնորդվել Կարգի 47-րդ կետով և հնարավորություն ընձեռնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հատկանշական է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.11.2018թ. Eauction համակարգի միջոցով ուղարկել է ծանուցում, որում նշված է, որ «Առնիկա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում որակավորման չափանիշներին իրեն համապատասխանությունը հավաստող որևէ փաստաթուղթ չի ներկայացրել, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Առնիկա» ՍՊԸ-ի հայտը մերժել: Միևնույն ժամանակ ծանուցման մեջ նշվել է, որ առաջարկում ենք «Առնիկա» ՍՊԸ-ին գնումների

մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տեղեկացրել է, որ այդ փուլում «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից ամբողջությամբ ուղարկվել են պահանջված փաստաթղթերը, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից դրանք չեն ուսումնասիրվել և չեն գնահատվել:

Ընկերությունը գտնում է, որ վերոհիշյալ փաստերը և գնահատող հանձնաժողովի գործողությունները հանգեցրել են Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Կարգի 47-րդ կետի պահանջների խախտմանը:

Ավելին, նման պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տված անգործության հետևանքով Պատվիրատուն ստիպված կլինի կնքել պայմանագիր հաջորդաբար տեղ զբաղեցրած ավելի բարձր գին առաջարկած մասնակցի հետ, ինչը էական վնաս կպատճառի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝ դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 29.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետով «Առնիկա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Առնիկա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2018թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

«Առնիկա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.12.2018թ. միջնորդությամբ խնդրել է առանց քննության թողնել ԳԲՔԱ-ԱՄ-2018/113 բողոքը:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 22-րդ կետի համաձայն՝ ԳԲՔԱ-ԱՄ-2018/113 քողոքը համարվել է

որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 24.12.2018թ. թիվ ԴՎԱ/5199 գրությամբ հայտնել է, որ 03.11.2018թ. հրապարակվել է ՀՀ ՊՆ կարիքների համար դեղորայքի՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերման ընթացակարգի հրավեր: Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև «Առնիկա» ՍՊԸ-ն՝ 1, 3, 4, 5, 7, 8, 13, 14 չափաբաժինների մասով: Աճուրդի արդյունքում «Առնիկա» ՍՊԸ-ն 1, 5, 7, 8, 13, 14 չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Ի պատասխան գնահատող հանձնաժողովի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու առաջարկին՝ «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից որևէ փաստաթուղթ չի ներկայացվել: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Eauction սխալ նախագծման պատճառով տեխնիկապես հնարավորություն չի տալիս օրենսդրությանը համապատասխան մերժելու այն մասնակցի հայտը, որը որակավորման փաստաթղթեր ընդհանրապես չի ներկայացրել, հանձնաժողովը որոշել է համակարգի միջոցով մրցույթը շարունակելու միակ տարբերակ՝ որակավորում չներկայացրած մասնակցին մերժելու վերաբերյալ ծանուցումը ուղարկել այն հարթակի միջոցով, որը նախատեսված է անհամապատասխանությունները շտկելու համար: Հանձնաժողովի քարտուղարի կողմից «Առնիկա» ՍՊ ընկերությանը անհամապատասխանությունների շտկման հարթակը օգտագործելով՝ ծանուցվել է հայտի մերժման վերաբերյալ, սակայն պարզվել է, որ Eauction համակարգը «Առնիկա» ՍՊ ընկերությանը մերժման արդյունքում 1-ին տեղ զբաղեցնող այլ մասնակիցներին չի ծանուցում՝ որակավորման փաստաթղթեր ներկայացնելու համար, ուստի պատշաճ ծանուցում ապահովելու համար անհրաժեշտ է «Առնիկա» ՍՊ ընկերության հայտը

համակարգում նորից մերժել: «Առնիկա» ՍՊ ընկերությունը՝ ի պատասխան իր կողմից ներկայացված հայտը մերժելու ծանուցման, ներկայացրել է որակավորման փաստաթղթեր, որոնք հանձնաժողովի կողմից չեն քննարկվել: Գնահատող հանձնաժողովն՝ արձանագրելով Eauction համակարգի թերի լինելու փաստը, որոշել է համակարգի միջոցով կրկին մերժել «Առնիկա» ՍՊ ընկերության հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցներին:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված 07.12.2018թ. թիվ 27/26-1/22663-18 պարզաբանման համաձայն՝ «Առնիկա» ՍՊ ընկերության օգտատերը (N48997) 22.11.2018թ ժամը 11:28:36-ին մուտք է գործել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2 ծածկագրով ընթացակարգի «որակավորման փաստաթղթեր» ներբեռնելու էջ, այնուհետև 22.11.2018թ. ժամը 11:34:54-ին դուրս է եկել համակարգի «Մրցույթների ցանկ» բաժին, սակայն «որակավորման» փուլի տվյալներ չեն տրամադրվել համակարգ և դրանք առկա չեն հենքում:

Հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պարզաբանումը, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վերոնշյալ աճուրդով ապրանքների ձեռքբերման հրատապությունը, անհրաժեշտությունը և այն հանգամանքը, որ մյուս մասնակիցների կողմից ներկայացվել են բանկային երաշխիքներ և գործընթացը գտնվում է պայմանագրերի կնքման փուլում, Պատվիրատուն առաջարկել է չկասեցնել ընթացակարգը, թույլատրել շարունակել պայմանագրերի կնքման գործընթացը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 24.12.2018թ. միջանկյալ որոշմամբ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի կասեցումը հանվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2018թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2018/113 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2018/113 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Առնիկա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության N 1 հավելվածի համաձայն՝ «Առնիկա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից մի շարք չափաբաժինների մասով:

3. «Առնիկա» ՍՊԸ-ին Eauction համակարգի միջոցով 21.11.2018թ. ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չի ներկայացվել: Նույն կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից 21.12.2018թ. ներկայացված բողոքը որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.12.2018թ. թիվ ԴՎԱ/5199

գրությունը և կից փաստաթղթերը, գտնում եմ, որ ԳԲՔԱ-ԱՄ-2018/113 բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված ***փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը,*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2»

ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Առնիկա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության N 1 հավելվածի համաձայն՝ «Առնիկա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից մի շարք չափաբաժինների մասով:

«Առնիկա» ՍՊԸ-ին Eauction համակարգի միջոցով 21.11.2018թ. ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝

1) համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3-ի.

բ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

գ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով). Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:

դ. զ. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չի ներկայացվել: Նույն կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Ընկերությունը բողոքով պնդել է, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում՝ 22.11.2018թ. Eauction համակարգի միջոցով ուղարկվել են որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն համակարգի թերի աշխատանքի պատճառով համապատասխան փաստաթղթերը գնահատող հանձնաժողովին չեն հասել:

Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ գործում առկա է Ընկերությանն ուղղված ՀՀ ֆինանսների նախարարության 18.12.2018թ. թիվ 27/26-1/23598-18 գրությունը, որի համաձայն՝ Ընկերության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությամբ բարձրացված խնդրի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է էլեկտրոնային աճուրդի համակարգը սպասարկող կազմակերպությանը: Վերջինս տեղեկացրել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ***«Առնիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր տվյալների հենքում առկա չեն:***

Ընկերությունը հայտնել է նաև, որ վերջինիս համապատասխան աշխատակիցը 22.11.2018թ. ժամը 11:28:36-ին մուտք է գործել Ընթացակարգի որակավորման փաստաթղթեր ուղարկելու էջ: Նույն օրը ժամը 11:34:54-ին աշխատակիցը դուրս է եկել հիշյալ էջից և մուտք է գործել մրցույթների ցանկ:

ՀՀ ֆիանսների նախարարությունը վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ ըստ սպասարկող կազմակերպության հավաստման՝

1) ***համակարգում խափանումներ չեն արձանագրվել, որը կարող էր պատճառ հանդիսանալ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը տվյալների հենքին չհասնելու համար.***

2) հնարավոր չէ պարզել, թե Ընկերության հիշյալ աշխատակիցը 22.11.2018թ. ժամը 11:28:36-ից մինչև ժամը 11:34:54-ը որակավորման փաստաթղթեր բեռնելու էջում ինչ գործողություններ է կատարել դիտարկիչում (բրաուզերում):

Այսպիսով՝ ՀՀ ֆինանսների նախարարության վերոհիշյալ գրության համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր տվյալների հենքում առկա չեն, ինչը հավաստում է այն փաստը, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեն ներկայացվել որակավորման չափանիշները հրմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, իբրև թե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է կիրառվեր ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը, ապա հայտնում եմ, որ էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը սահմանող ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշման 19-րդ կետի 5-րդ ենթակետը հստակ սահմանում է, որ նույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված ***փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը.*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին: Հետևաբար մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ընդհանրապես չներկայացնելու դեպքում, վերջինիս հայտն ենթակա է մերժման:

Հատկանշական է, որ նույն դրույթը սահմանված է նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Առնիկա» ՍՊԸ-ի բողոքը, որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ, անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Առնիկա» ՍՊԸ-ի կողմից 21.12.2018թ. ներկայացված բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ